22.12. 2023թ. | ք. Հրազդան | ոստ. Հրազդանի բաժին

ՈՐՈՇՈՒՄ ԹԻՎ – 310

ՎԱՐՉԱԿԱՆ ԻՐԱՎԱԽԱԽՏՄԱՆ ԳՈՐԾԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՀ ՆԳՆ ոստիկանության Կոտայքի մարզային վարչության Հրազդանի բաժնի պետ, ոստիկանության փոխգնդապետ՝ Զ.Ավդիշոևս, քննելով 07.12.2023թ. թիվ 310 վարչական իրավախախտման վերաբերյալ արձանագրությունը և կից նյութերը.

ՊԱՐԶԵՑԻ

2023 թվականի դեկտեմբերի 7-ին՝ ժամը 15:00-ի սահմաններում, Սաշա Աբրահամի Ավետիսյանը /ծնվ. 26.11.2004թ., ք. Հրազդան Վանատուր թաղ. 5շ. 33բն./ Հրազդան քաղաքի Կենտրոն թաղամասի Սահմանադրության հրապարակին հարակից երեխաների համար նախատեսված խաղահրապարակում օգտագործել է ծխախոտ, որով խախտել է <<Ծխախոտային արտադրատեսակների և դրանց փոխարինիչների օգտագործման հետևանքով առողջությանը հասցվող վնասի նվազեցման և կանխարգելման մասին>> ՀՀ օրենքի պահանջներն, որն առաջացնում է պատասխանատվություն՝ նախատեսված ՀՀ ՎԻՎ օրենսգրքի 173.2-րդ հոդվածով, որի համար ղեկավարվելով <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ >> ՀՀ օրենսգրքի 224-րդ հոդվածով.

ՈՐՈՇԵՑԻ

Սաշա Աբրահամի Ավետիսյանին

ՏՈՒԳԱՆԵԼ 50.000 / հիսուն հազար/ ՀՀ ԴՐԱՄԻ ՉԱՓՈՎ

Ինձ բացատրվել է <<Վարչական իրավախախտումների վերաբերյալ>> ՀՀ օրենսգրքի 288-րդ հոդվածով սահմանված որոշման գանգատարկման կարգն, որի համար ստորագրում եմ՝

_____ /ստորագրություն/

_____ /անուն, հայրանուն, ազգանուն/

Ստացա որոշման 1 օրինակը՝ << >>

_____ /անուն, հայրանուն, ազգանուն/

Ոստիկանության Հրազդանի բաժնի պետ, ոստ. փոխգնդապետ՝ **Զ.Ավդիշոև**